

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2018 թ. № ----- -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 796-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ Կառավարությունը որոշում է.

1. ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 13-ի «Կրթության և գիտության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» N 796-Ա որոշման՝

1) Հավելված N 2-ը լրացնել նոր՝ 91-րդ, 92-րդ և 93-րդ կետերով՝

«

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան օր, ամիս, տարի	Բնակության վայրի հասցե	Բուհի անվանումը
1	2	3	4	6
91.	Թադևոսյան Արման Յուրիկի	12.02.1997	ք. Երևան, Անդրանիկի 55 շ., բն.22 Մաշտոցի զինկոմիսարիատ	ՀՊՄՀ
92.	Աբելյան Վաչագան Արթուրի	10.03.1998	ք. Երևան, Սիսակյան փող. , 22 շ., բն 117	ՌԴ տնտեսագիտության բարձրագույն դպրոց
93.	Կոստանդյան Դավիթ Անդրանիկի	17.10.1996	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Սունդուկյան 4 փող., տուն 25	ՎՊՀ

».

2) Հավելված N 3-ը լրացնել նոր՝ 32-42-րդ կետերով.

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան օր, ամիս, տարի	Բնակության վայրի հասցե	Բուհի անվանումը
1	2	3	4	6
32.	Խաչատրյան Ալեքսանդր Գեղամի	04.08.1995	ք. Գյումրի, Օղակային 13 Գյումրու զինկոմիսարիատ	ԳԱԱ
33.	Ամիրբեկյան Արեն Յուրիի	01.06.1994	ք. Վանաձոր, Տարոն 2, ՔՇՀ 4, 25/11	ԵՊՀ
34.	Գուլբանյան Դարչիկ Գառնիկի	09.06.1995	ՀՀ Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Այգեգործների փող., տուն 12 Նոյեմբերյանի զինկոմիսարիատ	ԵՊՀ
35.	Ապրեսյան Զոհրակ Մեխակի	06.06.1995	ք. Երևան, Արաշիրյան 37, բն. 22 Շենգավիթի զինկոմիսարիատ	Պետական կառավարման ակադեմիա
36.	Ավետիսյան Ռաֆիկ Գուրգենի	05.05.1994	ք. Երևան, Շենգավիթ 12-րդ փ., 1-ին նրբանցք, 22 տուն	ՀԵՀ
37.	Ապիկյան Ռոբերտ Կարենի	21.07.1994	ք. Երևան, Ա. Վշտունու 3-րդ նրբ, 1/2 տուն Մաշտոցի զինկոմիսարիատ	ՀԱՊՀ
38.	Գինոսյան Սպարտակ Արծրունու	24.08.1994	ք. Երևան, Անտառային 41 Կենտրոնական զինկոմիսարիատ	ԳԱԱ
39.	Մանուկյան Հմայակ Վահանի	12.01.1995	ք. Երևան, Նալբանդյան 25/14, բն. 20 Կենտրոնական զինկոմիսարիատ	ՀՊՄՀ
40.	Մնացականյան Վարդան Արարատի	04.01.1995	ք. Երևան, Տիգրան Մեծի 29ա, բն. 49 Կենտրոնական զինկոմիսարիատ	ԵՊՀ
41.	Մկրտչյան Զավեն Շմավոնի	01.06.1995	ք. Երևան, Դավիթ Բեկի նրբ., տուն 8ա Էրեբունու զինկոմիսարիատ	ՀԱՊՀ
42.	Սիմոնյան Սիմոն Արայի	09.04.1995	ք. Երևան, Վ. Վաղարշյան փող., 21 շ., բն. 17	ԵՖՀ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 23-ի N 796-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայամանավորված է ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանության հիման վրա որոշմամբ ներկայացված քաղաքացիների բողոքի արդյունքում գիտության և կրթության բնագավառներում ունեցած նրանց նշանակալի նվաճումների վերանայմամբ :

2. Ընթացիկ իրավիճակը

<<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանել են գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները: Կրթության և գիտության նախարարի հրամանով ձևավորվել է տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողով: Կարգի 8-րդ կետով սահմանված նշանակալի նվաճումները հանձնաժողովի կողմից հաշվարկվել են բալային միավորների համակարգով՝ առավելագույնը 100 բալային միավորի սահմանաչափով, նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության հիման վրա: Մագիստրոսի կրթական ծրագրի շրջանակներում տարկետման իրավունքի հավակնություն են ձեռք բերում առնվազն 60, իսկ ասպիրանտական կրթական ծրագրի շրջանակներում՝ առնվազն 65 բալային միավոր հավաքած քաղաքացիները:

Կրթության և գիտության նախարարությունում քննարկվել են մի շարք քաղաքացիների բողոքներ, ովքեր չէին հավաքել սահմանված բալային միավորներ և չէին կարող հավակնել տարկետման իրավունքի: Արդյունքում , ուսումնասիրելով նրանց գիտության և կրթության բնագավառում ունեցած նվաճումները հավաստող փաստաթղթերը,

համադրելով դրանք հաշվարկման մեթոդաբանության հետ, հայտնաբերելով տեխնիկական բացթողումներ՝ վերանայվել և համապատասխանաբար բարձրացվել են նրանց հավաքած բալային միավորները:

3. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ կապահովվի «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու գործընթացը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 796-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 23-ի N 796-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 796-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 23-ի N 796-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման կամ գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա: